

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ ԿԱՄՈ ԳԻԳՈՅԱՆԻ ՀԵՏ

Ավագ գիտաշխատող, ֆ.մ.գ.թ.

ՀՀ ԳԱԱ Վ. Համբարձումյանի անվան Բյուրականի աստղադիտարան

14.07.2021



1. Նկարագրեք Ձեր անցած մասնագիտական ուղին:

1984թ-ին Երևանի պետական համալսարանի ֆիզիկայի ֆակուլտետն «Աստղաֆիզիկա» մասնագիտությամբ ավարտելուց հետո անմիջապես աշխատանքի ընդունվեցի Բյուրականի աստղադիտարանի 2.6մ աստղադիտակի լաբորատորիայում: Սկսվեց մեծ թվով դիտողական ծրագրերի իրականացումը: Այդ ծրագրերը ներկայացվում էին Բյուրականի աստղադիտարանի աշխատակիցների, ինչպես նաև մեր արտասահմանյան գործընկերների կողմից:

1986թ-ին Բյուրականի աստղադիտարանում սկսվեց մի նախագիծ, որն անվանվեց «Առաջին Բյուրականյան սպեկտրային շրջահայության երկրորդ մաս» (Առաջին Բյուրականյան շրջահայություն – First Byurakan Survey (FBS) կամ հայտնի Մարգարյանի շրջահայություն): Տվյալ նախագծի նպատակն էր նույն FBS թիթեղներից բարձր Գալակտիկական լայնություններում ընտրել թույլ պայծառությունների գերմանուշակագույն ավելցուկով աստղանման օբյեկտներ (սպիտակ թզուկներ, համեմատաբար պայծառ Սեյֆերտյան գալակտիկաներ, քվազարներ): Իմ առաջ դրվեց կոնկրետ խնդիր՝ նույն թիթեղներից ընտրել թույլ պայծառության ուշ սպեկտրային դասերի աստղեր, ինչպիսին են M և C (ածխածնային) աստղերը բարձր գալակտիկական լայնություններում: Սկսվեց նոր բացահայտումների շարքը մեկը մյուսի հետևից, որոնք արտահայտվեցին առանձին հոդվածների և ցուցակների տեսքով: Սկսվեցին նոր հայտնաբերված օբյեկտների սպեկտրային հետազոտություններն ինչպես 2.6մ աստղադիտակի օգնությամբ, այնպես էլ արտասահմանյան շատ աստղադիտակների վրա իմ գործընկերների կողմից:

2. Ի՞նչ ծրագրերի/նախագծերի մեջ եք այժմ ներգրավված:

Իմ կողմից պատրաստվել է մի քանի շատ հետաքրքիր ծրագիր, որոնց նպատակը մեր Գալակտիկայի հալոյի հետազոտությունն է ուշ M և C աստղերի համար՝ հիմնվելով մեծ տիրույթով Catalina փոփոխականության շրջահայության վրա, և որ ամենակարևորն է՝ Gaia տիեզերական նախագծի տվյալների վրա, որը Եվրոպական տիեզերական գործակալության առանցքային նախագիծն է և հիմա ընթացքի մեջ է: Այդ ծրագրերում առանցքային դեր ունի Չինական LAMOST աստղադիտակի սպեկտրային դիտումների օգտագործումը:

3. Ինչպիսի՞ միջազգային կամ տեղական համագործակցություններ ունեք:


Համագործակցությունները բազմաթիվ են և միայն միջազգային: Կցանկանայի նշել իմ համագործակցությունը Մարսելի (Ֆրանսիա) աստղադիտարանի գիտնականների

հետ, որը սկսվել է 1996թ-ից և մինչև հիմա հաջողությամբ շարունակվում է: Կուզենայի նշել իմ համագործակցությունը Մոնպելիեի (Ֆրանսիա) համալսարանի աստղաֆիզիկայի բաժանմունքի աստղագետների, Համբուրգի (Գերմանիա) աստղադիտարանի աստղագետների, Հռոմի (Իտալիա) Լա-Սապիենցա համալսարանի աստղագետների, Սբ. Քվենտինի Համալսարանի (UVSQ) (Ֆրանսիա) գիտնականների, Հարվարդ-Սմիթսոնյան աստղաֆիզիկայի կենտրոնի (ԱՄՆ) աստղագետների և Տաջիկստանի Աստղաֆիզիկայի ինստիտուտի աստղագետների հետ: Հատկապես ուզում եմ առանձնացնել համագործակցությունը Վիեննայի (Ավստրիա) համալսարանի աստղաֆիզիկայի բաժանմունքի գիտնականների հետ:

4. **Տպագրված կամ դեռ ընթացքի մեջ գտնվող ի՞նչ նշանակալից գիտական հոդվածներ կնշեք:**


Տպագրվել է ավելի քան 80 գիտական հոդված, որոնք միայն բարձր ազդեցության գործակից ունեցող աստղաֆիզիկական ամսագրերում են՝ հիմնականում արտասահմանյան: Գիտական հոդվածներից բացի SIMBAD աստղագիտական տվյալների բազայում ունեմ ավելի քան 30 էլեկտրոնային կատալոգներ:

Կցանկանայի նշել վերջին մի քանի հոդվածները, որոնք տպագրության մեջ են Astronomy & Astrophysics ամսագրում՝ համահեղինակությամբ Մոնպելիեի



համալսարանի և Միացյալ Նահանգների աստղագետների, շատ կարևոր ևս մի հոդված, որը նույնպես գտնվում է տպագրության մեջ PASA ամսագրում և պարունակում է բոլորովին նոր արդյունքներ՝ օգտագործելով Gaia նախագծի EDR3 տվյալներ՝ համահեղինակությամբ Վիեննայի համալսարանի աստղաֆիզիկայի բաժանմունքի պրոֆ. Թոմաս Լեբգելտերի:

Հատուկ կուզենայի անդրադառնալ 2019թ-ին MNRAS ամսագրում տպագրված



հոդվածին, որը M և C աստղերի ուսումնասիրողների մոտ մեծ հետաքրքրություն առաջացրեց: Հոդվածին կից SIMBAD տվյալների բազայում տեղադրվեց FBS-ից ընտրված M և C աստղերի երկրորդ վերանայված կատալոգը, որը պարունակում է 1471 նոր օբյեկտի տվյալներ: Ինչպես նաև կուզեի նշել 2021թ-ի փետրվար ամսին Astrophysics ամսագրում տպագրված հոդվածը, որը նվիրված է Catalina և LINEAR շրջահայություններից ընտրված պարբերական փոփոխականների սպեկտրային դասակարգմանը:

5. Ձեր կարծիքով ինչո՞ւմ է կայանում աստղագիտության կարևորությունը մարդկության զարգացման գործում:

Աստղագիտական դիտումները շատ մեծ կարևորություն և նշանակություն ունեն: Առաջնային և շատ կարևոր խնդիրները ֆիզիկայի խնդիրներ են և նպատակ ունեն բացահայտելու բազմաթիվ երևույթներ, այստեղ այլ կարծիք չի կարող լինել:

6. Ի՞նչ է Ձեզ համար Բյուրականի աստղադիտարանը:

Բյուրականի աստղադիտարանը Հայաստանի գիտության կարևորագույն կենտրոններից է: Այն աստղաֆիզիկական հետազոտությունների մի կենտրոն է, որտեղ կարելի է իրականացնել շատ հետաքրքիր նախագծեր և ունենալ նոր գիտական արդյունքներ:

Հարցազրույցը վարեց Մելինե Ասրյանը